ՎՐԱՍՏԱՆ ՄԱՄՍՏԱՆԸ

«ՎՐԱՍՏԱՆՈ» (ԱՎԱՆԴԱՎՈՐԱԿԱՆ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 35 - 36 (16838) ՇԱԲԱԹ 2 ՄԱՅԻՍԻ 2020Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

COVID - 19

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՉԵՂԱՐԿՈՒՄ ՈՒ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ՝ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Ապրիլի 29-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի ղեկավարությամբ կայացավ նոր կորոնավիրուսի տարածումը կանխելու միջգերատեսչական համակարգող խորհրդի հերթական նիստը:



Խորհրդի անդամները տեսակոնֆերանսի ընթացքում քննարկեցին սահմանափակումների չեղարկման առաջին փուլի առաջընթացի, էկոնոմիկայի աստիճանական վերականգնման եւ համաճարակաբանական իրավիճակին համապատասխան ձեռնարկվելիք հետագա միջոցառումների հարցերը:

Խորհրդի նիստում Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման, առողջապահության նախարարությունները տեղեկատվություն ներկայացրին ձեռնարկություններում առողջապահության նախարարության եւ անվտանգության կանոնների հանձնարարականներին հետեւելու գործընթացը մշտադիտարկելու մասին: Գերատեսչությունների

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ. ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, ապրիլի 24-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ անցկացվեց կորոնավիրուսի տարածումը կանխելու միջգերատեսչական համակարգող խորհրդին առընթեր հակաճգնաժամային տնտեսական խորհրդի նիստը, որի ընթացքում ներկայացվեց երկրի կառավարության հակաճգնաժամային տնտեսական ծրագիրը:

Ներկայացնելով երկրի էկոնոմիկայի վերականգնմանն ուղղված ծրագիրը՝ Գիորգի Գախարիան հայտարարեց, որ երկրում տնտեսական գործունեության սահմանափակումները կվերացվեն փուլ առ փուլ՝ 2 շաբաթը մեկ, եւ որ յուրաքանչյուր հաջորդ փուլին անցնելը տեղի կունենա համաճարակային իրավիճակի վերլուծությունից հետո: Իրավիճակը վատթարանալու դեպքում, հնարավոր է, չեղարկված սահմանափակումները նորից վերականգնվեն:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

80 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ՝ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ՄԵԿՆՈՂՆԵՐԻՆ

Համաշխարհային բանկը 80 միլիոն դոլար է հատկացնում Վրաստանին՝ կորոնավիրուսի դեմ պայքարի համար:

Ինչպես նշված է բանկի տարածած հաղորդագրության մեջ, Համաշխարհային բանկը Վրաստանին տրամադրել է 80 միլիոն ԱՄՆ դոլարի ֆինանսական օգնության փաթեթ, որը կօգնի կառավարությանը մեղմել COVID-19-ի հետեւանքները եւ պատասխանել դրանց՝ առողջապահության եւ սոցիալական ոլորտներում: Այս ֆինանսավորումը Համաշխարհային բանկի արագ արձագանքման փաթեթի (FTCF) մաս է՝ COVID-19-ի առումով:

Համաշխարհային

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆԸ՝ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԻԱՆԱԼԻ ՕՐԻՆԱԿ

Եվրահանձնաժողովի եվրոպական հարեւանության քաղաքականության եւ ընդլայնման հարցերով գլխավոր տնօրինության ղեկավարի տեղակալ Կատարինա Մատերնովան Վրաստանը անվանեց կորոնավիրուսի դեմ պայքարի հիանալի օրինակ:

Նման գնահատական նա տվեց օնլայն ճեպասուլիսի ժամանակ, որի ընթացքում խոսվեց կորոնավիրուսի համավարակի ժամանակահատվածում արեւելյան գործընկերության երկրներին Եվրամիության կողմից ցուցաբերվող աջակցության մասին: Ինչպես նշվեց ճեպասուլիսում, Եվրամիու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆ ՏԱՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԿԼԻՆԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, ապրիլի 24-ին Վրաստանի կառավարությունը ներկայացրեց հակաճգնաժամային տնտեսական ծրագիր, որի շրջանակներում, այլոց թվում նախատեսում է նաեւ կենսաթոշակների ավելացում:

Մանրամասնելով կենսական նշանակության այդ թեման՝ Վրաստանի ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանին հայտարարեց, որ կառավարությունը մոտ ապագայում խորհրդարան կներկայացնի նա-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՄԱՅԻՍԻ 9 - Ը՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐ

ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 75-ԱՄՅԱԿԸ

Մայիսի 9-ին նշվում է գերմանական ֆաշիզմի դեմ Մեծ հաղթանակի 75-ամյակը:

1945 թվականի մայիսի 9-ին, Գերմանիայի զինված ուժերի ներկայացուցիչ Քեյթելը, անզորությունից կողքի դնելով մարշալական մականը, հակահիտլերյան դաշնակից երկրների՝ Խորհրդային Միության, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի ներկայացուցիչների ներկայությամբ, ստորագրեց ֆաշիստական Գերմանիայի անվերապահ կապիտուլյացիայի ակտը, որի արդյունքում, հաղթանակով պսակվեց 1418 օր ու գիշեր տեւած մահուկենաց կռիվը:

Մեծ հաղթանակում իրենց արժանի ներդրումն ունեցան նաեւ վրաց եւ հայ ժողովուրդները: Այս երկու համեմատաբար փոքր ազգերն առանձնակի թանկ վճարեցին այդ հաղթանակի համար. նրանցից յուրաքանչյուրը զոհասեղանին նվիրաբերեց իր հազարավոր զավակների կյանքը:

Մասնավորապես, 1941-1945 թվականներին Վրաստանից զորակոչվեց շուրջ 700 հազար մարդ, որից գրեթե կեսը չվերադարձավ պատերազմից: 136 վրաստանցիներ արժանացան Հերոսի կոչման, այդ թվում 16-ը մեր հայրենակիցներն են: Գրեթե նույնքան զորակոչվեցին նաեւ Հայաստանից: Պատերազմի զոհասեղանին 300 հազարից ավելի զոհ տված հայ ժողովուրդը նշանակալի ավանդ ներդրեց Մեծ հաղթանակում: Նրա 107 զավակներ արժանացան Հերոսի կոչման:

Եվս 200 հազար հայ խորհրդային մյուս հանրապետություններից կռվել է Կարմիր բանակի շարքերում: 100 հազար հայ այլ երկրներից ֆաշիզմի դեմ պայքարում իրենց ավանդն են ներդրել՝ կռվելով հակահիտլերյան կոալիցիայով դաշնակից զորքերում ու եվրոպական երկրներում գործող պարտիզանական ջոկատներում եւ ընդհատակյա կազմակերպություններում:

ԱՊՐԻԼԻ 30-Ը ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ՕՐՆ Է

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ապրիլի 30-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն եւ պաշտպանության նախարար Իրակլի Ղարիբաշվիլին պաշտպանության ուժերի օրվա կապակցությամբ հարգանքի տուրք մատուցեցին եւ ծաղիկներ խոնարհեցին Վրաստանի տարածքային ամբողջականության պայքարում զոհված հերոսների հիշատակին:

Հիշեցնենք, որ վրացական բանակի հիմնադրումից անցել է 29 տարի. 1990-ի դեկտեմբերին Ազգային գվարդիան ստեղծվեց Գերագույն խորհրդի որոշմամբ: 1991 թվականի ապրիլի 24-ին հրաման է տրվել զորակոչիկներին պարտադիր զինվորական ծառայության մասին: Զորակոչը պաշտոնապես սկսվել է ապրիլի 30-ին, եւ այստեղից սկսվում է ժամանակակից վրացական բանակի պատմությունը:

Նշենք, որ երկրի պետականության վերականգնումից հետո, առաջին տարիներին ապրիլի 30-ը նշվում էր որպես Վաստանի զինված ուժերի օր եւ, միայն վերջին տարիներին այն վերանվանվեց ու կոչվեց Վրաստանի պաշտպանության ուժերի օր: Պաշտպանության ուժերի թվաքանակը, զորատեսակներն ու սպառազինությունը սահմանվում է Վրաստանի Ազգային անվտանգության խորհրդի կողմից: Այսօրվա դրությամբ, Վրաստանի պաշտպանության ուժերում հաշվվում է 37 հազար զինծառայող:

COVID - 19

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՉԵՂԱՐԿՈՒՄ ՈՒ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ՝ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տվյալներով, ձեռնարկությունների ակտիվ ստուգումը շարունակվում է: Տասնյակ ձեռնարկություններ, որոնք պահպանել են կանոնները, շարունակում են գործել: Լրացուցիչ ժամանակ տրամադրվեց այն ձեռնարկություններին, որտեղ հայտնաբերվել են թերություններ:

Նիստում քննարկվեց նաեւ Վրաստանի կառավարության ներկայացրած նպատակային սոցիալական ու տնտեսական հակաճգնաժամային ծրագիրը: Նշվեց, որ ֆինանսների նախարարությունից հետո, սոցիալական աջակցության վերաբերյալ հանրությանը մանրամասն տեղեկատվություն կներկայացնի առողջապահության եւ սոցիալական հարցերի նախարարությունը:

Համակարգող խորհուրդը քննարկեց նաեւ սննդի եւ բժշկական պաշարի մասին երկրում տիրող իրավիճակը: Շրջակա միջավայրի եւ գյուղատնտեսության նախարարության իրավասության տակ գտնվող հարցի կապակցությամբ, նախարար Լեւան Դավիթաշվիլին պարզաբանեց, որ երկրում սննդի մատակարարման առումով խնդիր չկա, եւ դրա մշտական լրացումը կատարվում է սահուն: Անդրադառնալով բժշկական պաշարի հարցին՝ նախարարը նշեց, որ այն համապատասխանաբար լրացվում է: Մասնավորապես, մոտ ժամանակներում կներկրվի 40 հազար «Պիսիար» թեստ, 20 հազար հակաբիոտիկային թեստ, ինչպես նաեւ անձնական պաշտպանիչ սարքավորումներ՝ համազգեստ, ձեռնոցներ, դիմակներ, ջերմաչափեր, պաշտպանիչ ակնոցներ եւ այլ բժշկական իրեր:

Միջգերատեսչական խորհրդի նիստում նշվեց, որ շարունակվում է վրաց քաղաքացիներին արտերկրից հայրենիք վերադարձնելու գործընթացը: Ըստ արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանու, Առողջապահության համաշխարհային կազմակերպության հանձնարարականների համաձայն, իրականացված հատուկ չվերթերի արդյունքում, արդեն իսկ 37 372 քաղաքացի վերադարձել է հայրենիք, իսկ Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչներն օգնել են 16 302 Վրաստանի քաղաքացու:

Քննարկվեց նաեւ երկրում համաճարակաբանական իրավիճակը: Այսօրվա տվյալներով, Վրաստանում առկա է կորոնավիրուսային վարակի 566 հաստատված դեպք, որից 184 մարդ արդեն ապաքինվել է: Կարանտինի ռեժիմում է մնում 5 243 մարդ, ստացիոնար հսկողության տակ՝ 550-ը: Արտերկրներից Վրաստանի երեք քաղաքացի տեղափոխվել է հայրենիք բուժօգնություն ստանալու համար, մահացել են 6-ը:

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ. ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նրա խոսքով, երբ բացվում են որոշ աշխատատեղեր, սա չի նշանակում, որ պետք է աշխատել այնպես, ինչպես մինչ համաճարակը:

Անդրադառնալով սահմանափակումների վերացման փուլերի թեմային՝ Գիորգի Գախարիան հայտարարեց, որ ապրիլի 27-ից մեկնարկող առաջին փուլում կվերացվեն թեթեւ մարդատարներով տեղաշարժի, տաքսիների երթեւեկության, առցանց առեւտրի, ցանկացած ապրանքի առաքման ծառայության, ագրարային բաց շուկաների գործունեության արգելքները:

Առաջին փուլից երկու շաբաթ անց, սահմանափակումների վերացման **երկրորդ փուլի** շրջանակներում, նախատեսվում է վերականգնել շինարարական աշխատանքները, շինարարական վերահսկողության հետ կապված աշխատանքները, շիննյութերի արտադրությունները, ավտոլվացման եւ ավտոսպասարկման կենտրոնների աշխատանքը, համակարգիչների, անձնական եւ կենցաղային ապրանքների վերանորոգումը, հանգստի գոտիների շահագործումը:

Համաճարակային իրավիճակի մանրամասն վերլուծությունից հետո, **երկրորդ փուլից** երկու շաբաթ անց, կսկսվի **երրորդ փուլը**, որի ընթացքում նախատեսվում է մանրածախ եւ մեծածախ խանութների, բացառությամբ՝ մոլերի, որոնք ունեն առանձին մուտք փողոցից), բոլոր տեսակի բաց շուկաների, արտադրությունների բացումը, հրատարակչական գործունեության վերսկսումը:

Սահմանափակումների վերացման **չորրորդ փուլում** կսկսեն գործել առեւտրային մոլերը, բաց տեսակի ռեստորաններ/սննդի կետերը (տեղում սպասարկելով), բոլոր տեսակի ֆինանսական ծառայությունները, գեղեցկության սրահները:

Հինգերորդ փուլում կբացվեն փակ շուկաները, բոլոր տեսակի ռեստորաններ/սննդի կետերը (տեղում սպասարկելով):

Վեցերորդ փուլի շրջանակներում, ըստ էության, կորոնավիրուսի տարածումը կանխելու նպատակով սահմանված գրեթե բոլոր սահմանափակումները կվերացվեն: Մասնավորապես, կվերականգնվի ժամանցային, մարզական հանգստի, ստեղծագործական գործունեության, ազարտային եւ այլ խաղային հաստատությունների, հյուրանոցների աշխատանքը, կրթական գործունեությունը, ոչ հեռավար պայմանակարգով գործող բոլոր այլ գործողությունները:

80 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ՝ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

բանկը համագործակցում է նաեւ Ասիայի ենթակառուցվածքների ներդրումային բանկի հետ՝ համաֆինանսավորման համաձայնագրի միջոցով լրացուցիչ 100 միլիոն ԱՄՆ դոլար ներգրավելու համար:

Միեւնույն ժամանակ, նախագիծը կտրամադրի որոշակի ֆինանսական աջակցություն կարիքավոր եւ խոցելի տնային տնտեսություններին՝ ընդլայնելով սոցիալական աջակցության նպատակային ծրագիրը եւ տրամադրելով ժամանակավոր դրամական փոխանցումներ նրանց, ովքեր կորցրել են աշխատանքը համավարակի պատճառով:

Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան շնորհակալություն է հայտնել Հարավային Կովկասում Համաշխարհային բանկին եւ ֆինանսական ինստիտուտի տարածաշրջանային տնօրեն Սեբաստիան Մոլինեուսին ցուցաբերած աջակցության համար: Համաշխարհային բանկը COVID-19-ի համավարակին արձագանքեց եւ աջակցություն ցուցաբերեց եւ որպես օգնություն Վրաստանին հատկացնեց 80 միլիոն ԱՄՆ դոլար, կառավարության ղեկավարը պատասխանում է իր պաշտոնական Twitter-յան էջում:

- Ես կցանկանայի շնորհակալություն հայտնել Համաշխարհային բանկին 80 միլիոն ԱՄՆ դոլարի հատկացված ֆինանսական աջակցության համար: Ավելին, մենք շարունակում ենք միասին աշխատել Log In Georgia նախագծի շրջանակներում եւ ավելի քան 700 գյուղերում ինտերնետ անցկացնելու համար: Մենք միասին կհաղթահարենք ճգնաժամը: Շնորհակալություն Սեբաստիան Մոլինեուսին նրա ջանքերի համար,- գրել է Գիորգի Գախարիան Twitter- ում:

ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂՐԵԼԻՁԵ. «ՊԵՏՔ Է ՍՈՎՈՐԵՆՔ ԱՊՐԵԼ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԵՏ»

- Մենք կամաց-կամաց պետք է սովորենք կորոնավիրուսային վարակի հետ ապրել, այնպես որ, նրանից քիչ վնաս կրենք, այդ իսկ պատճառով այս արգելքների մեղմացումը պետք է լինի փուլ առ փուլ,- արտակարգ դրությամբ պայմանավորված որոշ սահմանափակումների վերացման կապակցությամբ հայտարարեց Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի տնօրեն Ամիրան Գամղրելիձեն:

Նա անդրադարձավ նաեւ հանրային տրանսպորտի վերականգնման թեմային՝ նշելով, որ կառավարության կողմից սահմանված 6 փուլերից մեկի հետ անպայման կվերականգնվի նաեւ հանրային տրանսպորտը, սակայն դա կախված կլինի համաճարակային իրավիճակի հետ:

- Հանրային տրանսպորտը կվերականգնվի շուտով, սակայն մինչ այդ պետք է լավ պատրաստվենք: Մարդիկ չպետք է մտածեն, որ հաղթել ենք կորոնավիրուսին,- հայտարարեց Գամղրելիձեն:

Նրա խոսքով, ամենաուժեղ զենքը կորոնավիրուսի դեմ պայքարելու համար սոցիալական հեռավորությունն է:

ՎՐԱՍՏԱՆԸ՝ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԻԱՆԱԼԻ ՕՐԻՆԱԿ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյան օգնությունն իրականացվում է երեք ուղղությամբ: Առաջինը՝ հումանիտար եւ բժշկական կարիքների բավարարումը, երկրորդը՝ երկրների բժշկական եւ առողջապահական ոլորտների համակարգային աջակցությունը եւ երրորդը՝ էկոնոմիկայի վերականգնման միջոցառումները: Ինչպես նշեց Կատերինա Մատերնովան, Եվրամիությունն ընդհանուր առմամբ, արեւելյան հարեւանության երկրների համար ծրագրում է հատկացնել շուրջ 1 միլիարդ եվրո գումար:

Եվրահանձնաժողովի ներկայացուցչի խոսքով, Եվրամիությունը կուժեղացնի նաեւ արագ արձագանքման մեխանիզմները, որոնք ուղղված են երկրամասում տարբեր գործունեության աջակցությանը:

- Օրինակ, Վրաստանում բժշկական տեքստիլի արտադրությունը մեկ շաբաթում թողարկել է ավելի քան 40 հազար բժշկական խալաթ, եւ դա իրականացվեց նրանից հետո, երբ մեր դեսպանության աջակցությամբ արտադրությունում տեղակայվեց երկու հաստոց,- հայտարարեց նա:



COVID-19.

ԵՐԵՔ ՄԻԼԻՈՆԻՑ ԱՎԵԼԻ ՎԱՐԱԿՎԱԾ, ՄԵԿ ՄԻԼԻՈՆԻՑ ԱՎԵԼԻ՝ ԱՊԱՔԻՆՎԱԾ

Աշխարհում նոր տիպի կորոնավիրուսային վարակով պայմանավորված COVID-19-ով վարակվածների թիվն անցել է 3 318 455-ը, մահացածների թիվը հասել է 234 253-ի: Ապաքինվել է 1 048 467 մարդ:

Վիրուսով վարակվածների թվով առաջին տեղում հայտնված ԱՄՆ-ում 1 095 304 հաստատված դեպք կա: Այստեղ մահացածների թիվը 63 871 է: Այս ցուցանիշով եւս ԱՄՆ-ն առաջինն է աշխարհում: Ընդհանուր ցուցանիշով, երկրորդ տեղում գտնվող Իսպանիայում հաստատված դեպքերի թիվը 239 639 է: Մահացության ցուցանիշը կազմում է 24 543: Իտալիան վարակվածների թվով երրորդն է: Այստեղ հաստատված դեպքերի ընդհանուր թիվը 205 463 է: Վարակից մահացել է 27 967 մարդ: Կորոնավիրուսից վարակվածության ցուցանիշով հաջորդը Մեծ Բրիտանիան է. եվրոպական այդ երկրում գրանցվել է 171 253 հաստատված դեպք, մահացել է 26 771 մարդ: Հաջորդ տեղում Ֆրանսիան է, որտեղ կա 167 178 հաստատված դեպք: Վարակի հետեւանքով, մահացել է 24 376 մարդ: Գերմանիայում 163 009 հաստատված դեպք կա, մահացել է 6 623 մարդ: Թուրքիայում վարակակիրների թիվը հասել է 120 204-ի, մահացածներինը՝ 3 174-ի: Իրանին շրջանցած Ռուսաստանում վարակվածների ընդհանուր թիվը կազմում է 114 431: Երկրում մահացության ցուցանիշը կազմում է 1 169: Իրանում 94 640 հաստատված դեպք կա, մահացել է 6 028 մարդ: Բրազիլիայում 87 187 հաստատված դեպք կա, մահացել է 6 006 մարդ: Ինչ վերաբերում է համաճարակի սկիզբ հանդիսացող Չինաստանին, ապա հաստատվել է 82 874 հիվանդության դեպք, մահացածների թիվը կազմում է 4 633:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով, վարակ արձանագրած երկրների եւ տարածքների թիվն անցել է 210-ը:

ՌՈՒՍԱՍՏԱՆ
ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԱԽՏԱՆԻՇ՝ ԵՐԿՐԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՄՈՏ

Ռուսաստանի վարչապետ Միխայիլ Միշուստինի մոտ ախտորոշվել է կորոնավիրուս: Այս մասին Միշուստինը հայտարարեց Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ տեսազանգի ժամանակ:

- Հենց նոր հայտնի դարձավ, որ թեստերը ցույց են տվել դրական պատասխան,- ասում է Միշուստինը:

Ռուսաստանի նախարարների կաբինետի նախագահի պաշտոնը ժամանակավորապես կզբաղեցնի փոխվարչապետ Անդրեյ Բելոուսովը:

ԼԵՀԱՍՏԱՆ
ՀԱՐՍԱՆԻՔ՝ ՉՈՐՍՈՎ

Լեհաստանում կրկին թույլատրվում են հարսանեկան արարողությունները, իհարկե՝ որոշ սահմանափակումներով: Մասնավորապես, պարտադիր նախապայման է պաշտպանիչ դիմակներ կրելը:

«Euronews»-ը տեղեկացնում է, որ արարողության ժամանակ ներկաների թիվը պետք է 4 հոգուց ավելի չլինի: Չի թույլատրվում նաեւ հյուրերի հետ խնջույք կազմակերպել: Այս սահմանափակումներով, արդեն ամուսնության արարողություններ անցկացնողներ եղել են. իսկական սիրո համար համավարակը խնդիր չէ: Լեհաստանում կորոնավիրուսով վարակվել է 11 617 մարդ, մահացել՝ 535-ը:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՉԻԼ ԹԱԼԱԿՎԱՁԵ. «ԱՅՍ ՀԱՐՑԻՆ ԿԱՆԴՐԱԴԱՌՆԱՆՔ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ»

Նոր կորոնավիրուսի գլոբալ համավարակով պայմանավորված իրավիճակը կարծես երկրորդային պլան մղեց ընթացիկ տարվա աշնանը անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների եւ այդ կապակցությամբ ընտրական օրենսգրքում սահմանադրական փոփոխությունների կատարման հարցը:

Թեպետ, ինչպես պաձգվեց, թեմայի շուրջ թե' կառավարող «Վրացական երազանք» եւ թե' ընդդիմադիր մյուս կուսակցությունները շարունակում են ակտիվ խորհրդակցությունների անցկացումը: Դրա վկայությունը ապրիլի 29-ին Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվածեի հայտարարությունն էր, ըստ որի, Վրաստանում արտակարգ դրության ավարտից անմիջապես հետո, կվերսկսվի աշխատանքը սահմանադրական փոփոխությունների շուրջ:

Նրա խոսքով, ընտրական օրենսդրության հետ կապված հանդիպումները կշարունակվեն առցանց ռեժիմում:

Արչիլ Թալակվածեն անդրադարձավ նաեւ ընտրական օրենսգրքի փոփոխությունների հարցով ընդդիմության հայտարարություններին:

- Մենք ունենք հստակ խնդիր, որ ընտրություններն անցկացնենք սահմանադրությամբ սահմանված ժամկետում եւ ոչ միայն անցկացնենք, այլեւ մինչեւ ընտրությունները հասցնենք իրականացնել այն բարեփոխումները, որոնք նախընտրական միջավայրը կդարձնեն առավել մրցունակ, առավել արդար: Ցանկանում ենք, առավելագույնս հաշվի առնել ԵԱՀԿ-ի հանձնարարականները,- հայտարարեց Արչիլ Թալակվածեն եւ հավելեց.

- Ընդդիմությունը տեսնում է, որ այս ուղղությամբ գնում ենք դեպի համաձայնություն: Մենք, որպես իշխանություն, ունենք շատ հստակ նպատակ՝ անցկացնել ժողովրդավար, թափանցիկ եւ արդար ընտրություններ,- նշեց Արչիլ Թալակվածեն:



ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՐԱՆՑՎԵԼ Է 17 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻԻ ՏՈՒԳԱՆՔ

Արտակարգ դրության եւ պարետային ժամի սահմանումից հետո անցած 30 օրերի ընթացքում, Վրաստանի իրավապահ մարմինների կողմից դուրս է գրվել 17 025 000 լարիի տուգանք:

Մարտի 31-ից ապրիլի 30-ը արտակարգ դրության պայմանների խախտման համար, ընդհանուր հաշվով գրվել է 5 639 տուգանք, որոնց մեծ մասը (2 567) տուգանվել են պարետային ժամը, մեքենաներով տեղաշարժի (1 669) եւ հանրային վայրերում երեք մարդուց ավելի հավաքների ու 2 մետր սոցիալական հեռավորություն (1 310) պահպանելու կարգն ու 70 մարդ՝ ինքնամեկուսացման կարգը խախտելու համար: Իսկ չթույլատրված տնտեսական գործունեություն ծավալելու համար, տուգանվել է 4 ֆիզիկական եւ 9 իրավաբանական անձ:

ԱՅՍՕՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ 3,7 ՄԱՐԴ Է ԱՊՐՈՒՄ

Վրաստանի վիճակագրություն ազգային ծառայության տվյալներով, անցած տարի Վրաստանի բնակչությունը նվազել է 0,2 տոկոսով: 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ երկրում ապրում է ավելի քան 3,7 միլիոն մարդ:

0-14 տարեկան բնակչության թիվը կազմում է ամբողջ բնակչության 20,4 տոկոսը, իսկ աշխատունակ բնակչությունը (15-64 տարեկան)՝ 64,5 տոկոսը, 65 եւ ավելի տարիքի բնակչությունը՝ 15,1 տոկոսը:

Վրաստանի բնակչության միջին տարիքը, 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ, 37 տարեկան է: Բնակչության արական սեռի թվաքանակը գրեթե անփոփոխ է մնացել եւ կազմում է 1,8 միլիոն մարդ, իսկ բնակչության իգական սեռի թվաքանակը նվազել է 0,3 տոկոսով եւ կազմում է 1,9 միլիոն մարդ:

COVID-19-Ի ՊԱՏՃԱՌՈՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՒՄ Է 4 ՏՈԿՈՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԿՈՒՄ

Վրաստանի կենտրոնական բանկի նախագահ Կոբա Գվենետածեի հայտարարությամբ, բանկը 2020 թվականին 4 տոկոսի տնտեսական անկում է կանխատեսում:

Նշենք, որ մինչ այս կառավարությունը հայտարարություն էր տարածել, որ 2020 թվականին Վրաստանը 4 տոկոսի տնտեսական անկում կունենա: Նույն ցուցանիշն է կանխատեսում նաեւ Արժույթի միջազգային հիմնադրամը:

ՏԵՍԱԿՈՆՖԵՐԱՆՍ

ՔԵԹԵՎԱՆ ՑԻԽԵԼԱՇՎԻԼՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՄԱԿ-Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ ՀԵՏ

Ապրիլի 29-ին Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին Վրաստանում ՄԱԿ-ի ասոցիացման PITA ծրագրի երիտասարդական խմբի հետ անցկացրեց տեսակոնֆերանս:



Հեռավար հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի կառավարության կողմից COVID-19-ի կանխման ուղղությամբ իրականացվող եւ ծրագրված քայլերը:

Տեսակոնֆերանսին Քեթեւան Ցիխելաշվիլին երիտասարդներին մանրամասն տեղեկատվություն փոխանցեց կորոնավիրուսի հաղթահարման, կանխման նպատակով բռնազավթված տարածքներում եւ ազգային փոքրամասնությունների հոծաբնակ վայրերում պետնախարարի աշխատակազմի կողմից իրականացված գործունեության մասին եւ խոսեց ընթացիկ միջոցառումների ու իրականացվող քարոզարշավի մասին: Ընդգծվեց ճգնաժամի հաղթահարման գործընթացում երիտասարդ կամավորների ներգրավման կարեւորությունը:

Հանդիպումն անցկացվեց երկխոսության ձեւաչափով: Քեթեւան Ցիխելաշվիլին պատասխանեց երիտասարդների կողմից առաջադրված հարցերին եւ նրանց շնորհակալություն հայտնեց ճգնաժամի հաղթահարման գործընթացում ներգրավման ու ցուցաբերած ակտիվության համար:

Նշենք, որ տեսակոնֆերանսն անցկացվեց Վրաստանում ՄԱԿ-ի «Հանդուրժողականության քաղաքացիական գիտակցության եւ ինտեգրման աջակցության ծրագրի» (PITA) նախաձեռնությամբ եւ ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆ ՏԱՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԿԼԻՆԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

խաձեռնություն, որի համաձայն, կենսաթոշակները երաշխավորված կավելանան ամեն տարի:

Նրա խոսքով, կենսաթոշակների ավելացման խնդիրը տարիներ շարունակ եղել է գործադիր իշխանության օրակարգում:

- Տարվա սկզբին կենսաթոշակների բարձրացումը փաստ էր, որը գործում է բոլոր թոշակառուների համար 2020 թվականի հունվարի 1-ից: Սպասվող ավելացումը՝ 30 լարիի չափով, 70 տարեկանից բարձր թոշակառուների համար ուժի մեջ կմտնի հուլիսի 1-ից,- ասաց նախարարը:

- Մենք որոշել ենք ապագայում մշակել այնպիսի կանոն, որը գործնականում կապահովի կենսաթոշակների տարեկան բարձրացումը: Այս նախաձեռնությամբ Վրաստանի կառավարությունը մի քանի օրից կմտնի խորհրդարան,- հավելեց նախարարը:

Ըստ նրա, կենսաթոշակի բարձրացման չափը կախված կլինի գնաճից եւ տնտեսական աճի գործակցից՝ առնվազն 20-25 լարիի չափով:

Կանոնը հետեւյալն է. մինչեւ 70 տարեկան թոշակառուների թոշակի բարձրացումը տեղի կունենա՝ հաշվի առնելով սղաճը, իսկ 70-ից բարձրինը՝ սղաճը եւ տնտեսական աճի 80 տոկոսը:

- Վրաստանի պատմության մեջ մեկ տարվա ընթացքում կենսաթոշակների բարձրացում գրեթե չի գրանցվել: Եղել են տարիներ, երբ այն ավելացել է 20 լարիով, եւ եղել են տարիներ, երբ կենսաթոշակն ընդհանրապես չի բարձրացվել: Դա կախված էր կառավարությունից: Մենք ուզում ենք ներմուծել կանոն, ըստ որի, կենսաթոշակներն ավտոմատ կերպով ավելանան ամեն տարի. մինչեւ 70 տարեկան կենսաթոշակառուների համար 20, իսկ 70-ն անց՝ 25 լարիով: Ապագայում, եթե տնտեսական աճը կամ սղաճն ավելի բարձր լինեն, ապա այդ գումարները կկարգավորվեն ըստ այդ ցուցանիշների,- ասաց Իվանե Մաճավարիանին:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պետ Լեւան Կակավան, պետի տեղակալ Մամուկա Բարաթաշվիլին եւ սպասարկման դեպարտամենտի ղեկավար Լեւան Դգեբուաձեն, երկրում նոր կորոնավիրուսի համավարակի արդյունքում տուժվածների աջակցության ծրագրի շրջանակներում, հանդիպում ունեցան փոքր եւ միջին գործարարների ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը կողմերը խոսեցին հակաճգնաժամային ծրագրի երկրորդ փուլով նախատեսված փոխհատուցումների եւ հարկային արտոնությունների մասին ու քննարկեցին գործարարության աջակցության նպատակով ծրագրված տնտեսական նախագծերը:

Եկամուտների ծառայության պետը նշեց, որ Վրաստանի կառավարության կողմից իրականացվող քայլերը ծրագրված են քաղաքացիների առողջության պաշտպանության եւ, ապա էկոնոմիկայի աջակցության համար: Նրա խոսքով, այս ճգնաժամային ու համավարակի դեմ պայքարի պայմաններում նշանակալի է, որ յուրաքանչյուր քաղաքացին ստանա նպատակային սոցիալական օգնությունը, իսկ եկամտահարկի վճարման տեսանկյունից նպաստների հանձնմամբ, գործարարներին կտրվի աշխատատեղերը պահպանելու հնարավորություն:

- Իրականացվում են նշանակալի միջոցառումներ, որպեսզի ճգնաժամի պայմաններում մեր քաղաքացիները կարողանան պահպանել աշխատատեղերն ու եկամուտը, իսկ գործարարության աջակցությունը երկրի տնտեսական զարգացման բաղադրիչը է,- հայտարարեց եկամուտների ծառայության պետ Լեւան Կակավան:

Սպասարկման դեպարտամենտի պետ Լեւան Դգեբուաձեն հանդիպման մասնակիցներին ներկայացրեց կորոնավիրուսի համավարակի արդյունքում տուժյալների աջակցության մանրամասը ծրագիրը: Հանդիպումն անցկացվեց երկխոսության ձեւաչափով եւ գործարար սեկտորի ներկայացուցիչներին տրվեց իրենց հետաքրքրող հարցերը առաջադրելու եւ պատասխանները ստանալու հնարավորություն:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

COVID - 19

ԿԱՐԱՆՏԻՆՆԵՐԸ ԿԱՐԱՆՏԻՆՈՒՄ

ՀԱՑԱԶՐՈՒՅՑ՝ ՔՎԵՄՈ ՔԱՐԹԼԻԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՇՈԹԱ ՌԵԽՎԻԱՇՎԻԼՈՒ ՀԵՏ

Մեր ընթերցողը տեղյակ է, որ Վրաստանում նոր կորոնավիրուսի լայն տարածումը կանխելու նպատակով, խիստ կարանտին էր հայտարարվել Բոլնիսիի եւ Մառնեուլիի մունիցիպալիտետներում: Չնայած դրան, Քվեմո Քարթլիի տարածաշրջանում այդ մունիցիպալիտետները շարունակում են մնալ վարակի տարածման նշանակալի օջախներ: Վարակվածների թիվն ավելանում է, որը պայմանավորված է մի շարք պատճառներով, որոնց թվում է բնակչության որոշակի հատվածի անպատասխանատու վերաբերմունքը:

Մեզ հետ զրույցում Քվեմո Քարթլիի երկրամասի պետական լիազոր Շոթա Ռեխվիաշվիլին հայտարարեց, որ չնայած ձեռնարկած միջոցներին, ցավոք, վարակվածների թիվն ավելանում է: Ապա ավելացրեց, որ Բոլնիսիի եւ Մառնեուլիի մունիցիպալիտետներից բացի, ստիպված կարանտինի կարգավիճակ սահմանվեց նաեւ Թեթրիծղարոյի մունիցիպալիտետում:

- Հատկանշական է, որ ընդհանուր մունիցիպալային կարանտիններին զուգահեռ, հայտարարվել են մի շարք ներքին կարանտիններ: Մասնավորապես, նման պայմանակարգ է հաստատվել Քվեմո Քարթլիում, Բոլնիսիում եւ Նախիդուրիում, Կազրեթիում, Բալիճում, Ռաճիսուբանիում: Նշեմ, որ մինչեւ ներքին կարանտինի հայտարարումը, այդ բնակավայրերում հայտնաբերվեց 22 վարակված, ինչը որոշակի զգուշություն մտցրեց բնակչության շրջանում: Միայն դրանից հետո, կարելի է ասել, սկսեցին պահպանել կարանտինով սահմանված սահմանափակումները, սկսեցին հետեւել պարետային ժամի պահանջներին: Վարակի կանխման միջոցառումների ուժեղացումից հետո, անցկացված ստուգումները բացահայտեցին եւս 47 վարակվածի, որը դարձավ կարանտինի պայմանակարգի է'լ ավելի խստացման պատճառ:

- Որքանով տեղեկացված ենք, չնայած հայտարարված կարանտինի, մարդիկ կարողանում էին շրջանցիկ ուղիներով երթեւեկել, անգամ ապրանք էին հասցնում շուկաներ:

- Ցավոք, դուք իրավացի եք, հենց դա էլ պատճառ դարձավ, ապրիլի 28-ից կարանտինի պայմանները հնարավորինս խստացվեցին, վերահսկողություն ենք սահմանել ոչ միայն ավտոճանապարհների, այլեւ բնակավայրերը միմյանց կապող արահետների նկատմամբ: Հենց դրանում էլ արտահայտվում էր բնակչության անպատասխանատու վերաբերմունքը: Հակառակ դեպքում, համաճարակը նման տարածում չէր կարող ունենալ: Ըստ երեւույթին, այստեղ զգացնել տվեց Քվեմո Քարթլիի յուրահատկությունը, բազմազգ բնակչության գործոնը: Չնայած լեզվական արգելքին, վարակման առաջին դեպքերի բացահայտումից հետո, ակտիվ քարոզչական աշխատանք ծավալվեց, բնակչությանն անընդմեջ տեղեկատվություն էինք փոխանցում բուկլետների միջոցով, տեղական լրատվամիջոցներով եւ, իհարկե, ձեր «Վրաստան» ու ադրբեջանական «Գյուրջիստան» թերթերի օգնությամբ: Թեպետ, անկեղծ ասած, այդ հարցում էլ, ըստ երեւույթին, նկատվեցին որոշակի բացթողումներ:

- Ի՞նչ ի նկատի ունեք:

- Թեկուզ այն, որ կարանտինի պայմանակարգի կանոնների խախտման համար, Թբիլիսիից հետո բոլորից շատ տուգանվել են մեր երկրամասի բնակիչները: Սահմանված կանոնների անտեսում վավերացվեց ոչ միայն պարենային խանութներում, բանկերում, այլեւ անմիջականորեն փողոցներում, անգամ գերեզմանատներում: Օրինակ, վիրուս հայտնաբերվեց շտապ օգնության մեքենայի վարորդի մոտ, որից հետո նրա ողջ ընտանիքը մեկուսացվեց: Սակայն մինչեւ մեկուսացումը, նրա կինը գրեթե ամեն օր առնչվում էր հարեւանների հետ, նրանց մոտ սուրճ էր խմում, զրուցում էին... Եվ այն պայմաններում, երբ բոլոր լրատվամիջոցներում ու հեռուստաթերներում հնչում էր «Մնա տանը» կարգախոսը: Ավելացնեմ նաեւ, որ որոշակի թերացումներով անցկացվեց նաեւ բնակչության համընդհանուր ստուգման գործընթացը: Շատ հաճախ ստուգում անցկացնողները բավարարվում էին հարցադրումներով՝ ջերմություն ունե՞ք, թե՞ ոչ, հա՞զ, փռշտո՞ց... Եվ դա այն պայմաններում, երբ արդեն սկսվել էին ներքին տարածումները: Հենց դրանով էլ կարելի է պայմանավորել այն, որ շտապ օգնության շատ բժիշկներ վարակվեցին հենց նման շրջայցերի ժամանակ:

- Իսկ ինչպե՞ս արձագանքեց բնակչությունը կարանտինի պայմանների խստացմանը:

- Վախեցան, սակայն բնակչության այս արձագանքն արդեն ուշացած էր: Արդյունքում, մի մասը մեծ զգուշություն է ցուցաբերում, իսկ որոշակի հատվածը շարունակում է անպատասխանատու մոտեցում ցուցաբերել: Չի կարելի միանշանակ նշել, որ նրանք տեղեկացված չեն կամ երկրի կառավարությունը ժամանակին չի զգուշացրել: Երեք լեզուներով՝ վրացերեն, հայերեն եւ ադրբեջաներեն, տեղեկատվություն ենք տարածել:

ՄԱՌՆԵՈՒԼԻԻՆ ԵՎ ԲՈԼՆԻՍԻԻՆ ԱՎԵԼԱՑԱՎ ՆԱԵՎ ԹԵԹՐԻԾՂԱՐՈՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանում արտակարգ դրության պայմանակարգի հաստատումից հետո, կարանտինի խիստ ռեժիմ ներդրվեց նախ Մառնեուլիի, ապա Բոլնիսիի մունիցիպալիտետներում: Պատճառը վարակի տարածման դժվար վերահսկելիությունն էր: Մեկ շաբաթ առաջ, Քվեմո Քարթլիի երկրամասի այդ երկու մունիցիպալիտետներին միացավ Թեթրիծղարոյի մունիցիպալիտետը, որտեղ միայն մեկ օրվա ընթացքում բացահայտվեց կորոնավիրուսով վարակման ավելի քան մեկուկես տասնյակ դեպք, ավելի ստույգ՝ 19 նոր դեպք, որից 12-ը մունիցիպալիտետի կենտրոնից՝ Թեթրիծղարոյից էր: Խիստ կարանտինում է գտնվում նաեւ քաղաքի հիվանդանոցը, քանի որ վիրուս ախտաճշվեց նաեւ բուժքույրերից մեկի մոտ: Արդյունքում, մունիցիպալիտետի կենտրոնը հայտնվեց կարանտինի խիստ պայմանակարգում: Մենք փորձեցինք պարզել, թե տեղացիները ինչպե՞ս են ընկալում կարատինի սահմանափակումների եւ իրադարձությունների նկատմամբ:

Այս հարցով դիմեցինք Թեթրիծղարոյի մունիցիպալիտետի Սամշվիլդե գյուղից սակրեբուլոյի պատգամավոր Անդրանիկ Սարգսյանին:

- Մեր պարագայում հարկ է արժանին հատուցել երկրի կառավարությանն ու համապատասխան մարմիններին: Թեթրիծղարոյում վիրուսի ախտորոշումից հետո անմիջապես լրիվությամբ փակվեց քաղաքը եւ նրա կապը գյուղերի հետ, ժողովրդի մեջ դեռ որոշ չափով խուճապ կա, քանի որ շատերի մոտ ախտորոշվեց այն, եւ հիմա բոլորը տանն են, պաշտպանում են կարանտինի կանոնները, ու քաղաքապետարանն էլ ակտիվ աշխատում է վիրուսի տարածման կանխման դեմ: Սամշվիլդեում, ինչպես նաեւ մունիցիպալիտետի հայաբնակ մյուս բնակավայրերում՝ Դաղեթ Խաչենում, Սամղրեթիում, Դուռնուկում, իրավիճակը հանգիստ է, օրինապահ ժողովուրդ է ապրում: Այս բնակավայրերում, կոնկրետ, կորոնավիրուս ոչ ոքի մոտ չի ախտորոշվել, մթերքի խնդիր չունենք, հատուկ մարդիկ կան, որոնք դեղատներում դեղորայքի պակասի դեպքում քաղաքից գյուղացիների համար գնումներ են կատարում,- մեզ հետ զրույցում ասաց Ա.Սարգսյանը:

Արդեն երրորդ շաբաթն է, եւ կարանտինի պայմաններում ապրող Մառնեուլիի ու Բոլնիսիի մունիցպալիտետներում, բարեբախտաբար, նոր դեպքեր չեն գրանցվել:

Կարանտինի խիստ պայմանակարգը որոշակի իր հստակեցումներն է մտցնում մարդկանց ապրելակերպում: Խոսքը ոչ միայն բոլորին հայտնի կարգի պահպանումն է, այլեւ մթերքով ապահովումը: Օրինակ, Մառնեուլիի մունիցիպալիտետի Աղքյորփի գյուղում COVID-19-ով պայմանավորված ինքնին ծագեց առեւտրի նոր ձեւը ապրանքափոխանակումը՝ բարտերը:

- Իսկ ինչո՞ւմն է կայանում այդ ձեւը,- հետաքրքրվեցի իմ գործընկեր «Ալիք Մեդիա» լրատվական հարթակի թղթակից Աննա Թանդարյանից, որը կարանտինի պատճառով դեռեւս մնում է իր գյուղում:

- Գյուղը բարձրալեռ է, եւ ժողովուրդը հիմնականում անասնապահությամբ է զբաղվում: Նրանց եկամուտի աղբյուրը կաթնամթերքի վաճառքն է: Եվ երբ արգելվեց մեքենաներով տեղաշարժը, ու բնակիչները չկարողացան արտահանել իրենց մթերքը, հենց տեղում՝ գյուղի մնացած բնակիչների հետ սկսեցին փոխանակում կատարել: Օգնեց նաեւ Մառնեուլիի քաղաքապետարանը, որն ավտոբուս հատկացրեց, եւ գյուղից 10 հոգի այդ ավտոբուսով գնում են Մառնեուլի՝ սննդամթերք գնելու:

Ինչ վերաբերում է Բոլնիսիի մունիցիպալիտետի իրավիճակին, ապա այն ավելի բարդ է, ընդհանուր առմամբ, փակվել է 8 գյուղ եւ 80-ից ավելի վարակված մարդ կա:

Ահա թե ինչ պատմեց մեզ Բոլնիսիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավոր Լեւոն Մանուկյանը:

- Հուրախություն մեզ, մեր Բոլնիս-Խաչենում վարակի ոչ մի դեպք չկա, գյուղացիները տանից դուրս չեն գալիս, հասկանում են հարցի լրջությունը եւ պահպանում կարանտինի կանոնները: Հույս ունեմ՝ այսպես էլ կշարունակվի եւ առանց վարակվածների կհաղթենք այս վիրուսին:

Ինչեւիցե, մնում է հուսալ, որ վարակի տարածման մասշտաբների նվազեցման վերջին մեկ շաբաթվա միտումը կշարունակվի, եւ մենք ի վերջո կկարողանանք հաղթահարել կորոնավիրուսը:

ԷԴԳԱՐ ՄԱՋՄԱՆՅԱՆ
Մեր հատուկ թղթակից
Մառնեուլի-Թեթրիծղարո-Բոլնիսի

ՍՊԵՑԻԱԼՈՒՐ ՊՅԵՌՈՏԵՍՏԱՅԻՆ ՏԱՄՍԱԽՈՒՐ

ԱՅՆ ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԻՆ, ՈՒՄ ՀԵՌԱԽՈՍԱԶԱՆԳԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ՎԵՐԱՅՐԵԼ ԷՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ, ՏՐՎԵՑ 15 ՐՈՊԵԱՆՈՑ ԱՆՎՃԱՐ ԽՈՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Այն մեղադրյալներին, ում Վրաստանի դատախազությունը, ելնելով ստեղծված իրավիճակից, մինչեւ մայիսի 22-ը վերացրել էր հեռախոսազանգերի գոյություն ունեցող սահմանափակումը, յուրաքանչյուրին տրվեց 15 րոպեանոց անվճար հեռախոսախոսակցության ժամանակ:

Այսօրվա դրությամբ, քրեակատարողական համակարգում շուրջ 300 մեղադրյալների քննչական մարմնի կողմից սահմանված էր հեռախոսազանգերի սահմանափակում: Հենց այդ սահմանափակման պատճառով, վերոնշյալ անձինք չհայտնվեցին բանտարկյալների այն ցուցակում, ում ապրիլի 22-ին Կարմիր խաչի միջազգային կազմակերպության կողմից, որպես նվեր, ֆինանսավորվեց անվճար խոսակցական ժամանակը:

Որպեսզի ապրիլի 22-ի դրությամբ հեռախոսազանգերի սահմանափակում ունեցող բանտարկյալները կարողանան հեռախոսով հաղորդակցվել ընտանիքների եւ արտաքին աշխարհի հետ, Վրաստանի արդարադատության նախարարի նախաձեռնությամբ, ձեռք բերվեց պայմանավորվածություն քրեակատարողական համակարգին սպասարկումներ մատուցող ընկերության հետ եւ նման յուրաքանչյուր բանտարկյալի ապրիլի 26-ից տրվեց 15 րոպեանոց անվճար խոսակցության ժամանակից օգտվելու հնարավորություն:

Հիշեցնենք, որ նոր կորոնավիրուսի հնարավոր տարածումը կանխելու նպատակով, քրեակատարողական համակարգում ընթացիկ տարվա մարտի 5-ից գործում են արտակարգ պայմաններ, եւ այդ ժամանակից սկսած բոլոր տեսակի ժամադրությունները դադարեցվել են: Որպեսզի սահմանված սահմանափակումների արդյունքում արտաքին աշխարհի հետ մեղադրյալ/բանտարկյալների հաղորդակցման պակասորդը մասնակի փոխհատուցվի, արդարադատության նախարարի նախաձեռնությամբ, արտակարգ պայմանների ժամանակահատվածում բոլոր բանտարկյալներին ամսական անվճար տրվում է 15 րոպեանոց անվճար խոսակցության հնարավորություն: